ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 մարտի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

37
(2887)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՐ ՄԻԼԻՈՆԱՏԵՐ ՔԱՎՈՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ Է ՏԵՂԱՎՈՐԵԼ, ՈՐ ՀԵՏԸ ՓԱՐԻԶ ՏԱՆԻ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իր որդու քավորին, որը խոշոր գործարար է ներկայանում, դասավորել է Ազգային ժողովի ամենաստորին օղակում աշխատանքի, որ Փարիզ տանի: «Ժողովուրդ» օրաթերթը հերթական աղմկահարույց բացահայտումն է արել:

Մինչ մանրամասներին անդրադառնալը արձանագրենք, որ կոռուպցիան հետապնդում է Ալեն Սիմոնյանին: Նրա գործունեության շատ դրվագներում կան կոռուպցիայի դրսեւորման ցցուն օրինակներ, որպիսիք ինքը՝ Ալեն Սիմոնյանը, նախկինում քննադատում էր՝ համարելով անթույլատրելի:

Եւ այսպես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ 2021 թվականին, երբ Ալեն Սիմոնյանի կարիերայի փթթուն ժամանակահատվածն էր, նոր ԱԺ նախագահի պաշտոն էր ստացել, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, միլիոնատեր քավորին ընդունել է ԱԺ-ում իր ենթակայությամբ աշխատանքի, ներգրավել աշխատանքային պատվիրակության կազմում, որոնք գործուղվել են Փարիզ:

Ուսումնասիրելով ԱԺ նախագահի կարգադրությունը՝ առաջին հայացքից ամեն ինչ կարգին է, կարծես բոլորը Ազգային Ժողովի աշխատակիցներ են, որոնց մի մասի գործուղման ծախսերը հոգում է ՀՀ պետբյուջեն, մի մասն իրենց միջոցներով են մեկնել, սակայն շարքն ուսումնասիրելով՝ նկատեցինք, որ ցանկի վերջին տեղերում նշված է Էդգար Ավագյանի անունը, որը ներկայացված է Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչության անձնագրային սպասարկման բաժնի կրտսեր մասնագետ, իսկ կրտսեր մասնագետները գրեթե երբեք չեն մեկնում ԱԺ նախագահի հետ որեւէ երկիր:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ վերոնշյալ անձն Ալեն Սիմոնյանի որդու կնքահայրն է: Այո՛, նույն Էդգար Ավագյանն է, որը Ծաղկաձոր քաղաքի «Պալլադա Ծաղկաձոր» բնակելի համալիրի սեփականատերերից է, «Ֆրինյուզ» հեռուստաընկերության սեփականատերը, որտեղ տնօրենն Ալեն Սիմոնյանի կինն է:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմեց ՀՀ Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչություն, որտեղ պաշտոնապես հաստատեցին մեր ունեցած տեղեկությունները:

Պարզվեց, որ Ալեն Սիմոնյանի որդու քավորը՝ Էդգար Ավագյանը, իսկապես Ազգային ժողովում աշխատանքի է անցել 2021 նոյեմբերի 5-ին եւ այնտեղ աշխատել է գրեթե 3 ամիս՝ մինչեւ 2022 հունվարի 17-ը:

Ստացվում է, որ Ալեն Սիմոնյանը գտել է քավորի հետ իր ենթակայությամբ հեշտ ճանապարհորդելու եղանակը: Տարօրինակն, իհարկե, նաեւ այն է, որ օլիգարխ ներկայացող Էդգար Ավագյանը համաձայնել է ԱԺ պատվիրակության կազմում Ֆրանսիա կամ այլ երկրներ մեկնել, որ ինքնաթիռի «տակից» հատուկ ավտոմեքենաներով դիմավորեն, տանեն բարձրակարգ հյուրանոց:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այս շաբաթվա վերջին Նիկոլ Փաշինյանը պատրաստվում է այցելել Շիրակի մարզ: Նախնական մարզային այցի օր նշանակված է շաբաթ՝ մարտի 23-ը: Ավելին՝ ըստ մեզ հասած տեղեկությունների՝ Փաշինյանի այցին հնարավոր է նաեւ հաջորդի Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանի պաշտոնանկությունը: Ինչպես ավելի վաղ գրել էինք, Փաշինյանը մտադիր է ամեն գնով Շիրակի մարզպետ նշանակել իր կնոջ՝ Աննա Հակոբյանի մորաքրոջ թոռանը՝ Վահագն Մկրտչյանին: Եւ, ահա, Մուշեղ Մուրադյանի հնարավոր պաշտոնանկությունից հետո Շիրակի մարզպետ կդառնա վարչապետի տիկնոջ ազգականը:



«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «Ուսումնասիրելով Ազգային ժողովի 2024 թվականի առաջին եռամսյակի գնումները՝ նկատում ենք, որ խորհրդարանը էլեկտրոնային աճուրդի գնման եղանակով ձեռք է բերել ՀՀ Ազգային ժողովի 2024 թվականի կարիքների համար օրացույցներ: Ազգային ժողովը կնքել է 2 նմանատիպ պայմանագիր, որոնցից մեկը 3 մլն 239 հազար դրամ արժե, իսկ մյուսը՝ 1 մլն 626 հազար դրամ: Ազգային ժողովն իր կարիքների համար շատ է նմանատիպ անհիմն գնումներ իրականացնում: Պարզաբանենք՝ ինչպես: 3 մլն 239 հազար դրամի ձեռք է բերվել աշխատանքային օրագիր եւ սեղանի օրացույց: Ըստ պայմանագրի բնութագրի եւ պայմանագրի պահանջի՝ օրագրերը եւ օրացույցները պետք է լինեն ՀՀ ԱԺ լոգոյի տպագրությամբ կամ դաջվածքով: Յուրաքանչյուր էջի վերին հատվածի աջ եւ ձախ կողմերում պետք է տպագրված լինի ՀՀ ԱԺ լոգոն՝ հայերեն-անգլերեն լեզուներով, ինչպես նաեւ ամիս, օր, շաբաթվա օրեր գրառումները, էջերը պետք է լինեն համարակալմամբ (էջի ներքեւի հատվածի մեջտեղում): Օրագրի 1-ին էջի վրա պետք է տպագրված լինի ՀՀ ԱԺ լոգոն՝ հայերեն, անգլերեն լեզուներով , եւ գրառումը, ինչպես նաեւ 2-րդ էջը պետք է լինի դատարկ՝ առանց տպագրության, 3-րդ էջի վրա հայերեն, անգլերեն լեզուներով պետք է տպագրված լինի՝ անձնական տվյալների լրացման դաշտ, 4-րդ էջում՝ 2024 թվականի օրացույցի, իսկ 5-րդ էջում՝ 2025 թվականի օրացույցի տպագրությամբ՝ նիստերի օրերին համապատասխան վանդակները մոխրագույն երանգավորված: Գնվել է 1200 օրագիր եւ օրացույց, որոնց մեկ հատի արժեքը կազմել է 2 799 դրամ եւ 2 199 դրամ: Այս պայմանագիրը կնքվել էր «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի հետ, սակայն մեկ այլ պայմանագիր, որով կրկին օրացույցներ են գնվել, ձեռք է բերվել անհատ ձեռներեցից: Նշված պայմանագրի արժեքը կազմել է 1 մլն 626 հազար դրամ, որը ծախսվել է 2024 թվականի համար նախատեսված եռափեղկ կամ եռամսյա օրացույց ձեռք բերելու համար: Նշված օրացույցից ձեռք է բերվել 570 հատ, որի մեկ հատի արժեքը կազմել է 2 058 դրամ: Նույն պայմանագրով ձեռք է բերվել նաեւ 2024 թվականի համար նախատեսված օրացույց՝ տնակաձեւ: Նշված օրացույցից ձեռք է բերվել 500 հատ, որի արժեքը կազմել է 905 դրամ: Ստացվում է, որ Ազգային ժողովը պատրաստ է եւ՛ ԱԺ բացօթյա սրճարանի համար գրեթե նույնքան վճարել, եւ՛ օրացույցների եւ օրագրերի համար, սակայն որն է տրամաբանությունը, պարզ չէ»:

ԻՄ ՔԱՅԼԸ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Մարդկությանը հայտնի բոլոր բարեգործական հիմնադրամների շնորհները ուղղվում են տարբեր կարիքավոր անձանց եւ ոլորտներ: «Իմ քայլը» բարեգործական հիմնադրամի դեպքում 277,5 միլիոն դրամ շնորհներից ստացված եկամտի կեսից ավելին՝ 147.5 միլիոն դրամը, աշխատավարձի, գործուղման եւ այլ ծախսերի տեսքով ուղղվել է վարչական ծախսերին (կազմակերպության 2022թ. հաշվետվություն), այսինքն՝ հենց իրենց: Հիրավի խելացի մտածված սխեմա է՝ ադմինիստրատիվ ռեսուրսի շնորհիվ՝ բարեգործականի անվան տակ կորզել գումարներ՝ ապա դրանց «անմեղ» ձեւով տիրանալ՝ ստանալով որպես աշխատավարձ: 277.5 միլիոն դրամից 99.7 միլիոնը աշխատավարձ է:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՄԱՎԻՐԻՑ ՄԵԾ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ

2030թ.-ին միայն առաջին համալսարանը կտեղափոխվի Ակադեմիական քաղաք. ArmLur.am-ի հետ զրույցում հայտարարել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Թագուհի Ղազարյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանում բուհերի թիվը կկրճատվի. կունենանք ընդամենը 6 բուհ:

-Տիկին Ղազարյան, Նիկոլ Փաշինյանը երեկ հայտարարեց, որ երկարաժամկետ սահմանում Երեւանում որեւէ բուհ չպետք է լինի, Ակադեմիական քաղաքից դուրս առհասարակ որեւէ բուհ չպետք է լինի: Երկարաժամկետ ասելով՝ ինչ նկատի ուներ, ինչ ժամկետների մասին է խոսքը, ինչ փուլում պետք է այս ծրագիրն իրագործվի:

-Վերջնաժամկետի հարցում դեռեւս որոշում չկա, կա առաջին փուլի վերաբերյալ որոշում, որ 2030 թվականից արդեն առաջին բուհը տեղափոխված կլինի Ակադեմիական քաղաք, եւ դա նորություն չէ. թե՛ Ակադեմիական քաղաքի հայեցակարգում, թե՛ կրթության մինչեւ 2030 թվականի ռազմավարության մեջ նշված է եղել: Մենք խոսում ենք քաղաքի մասին, որն իր մաշստաբներով ավելի մեծ է, քան պայմանականորեն ասած Արմավիր քաղաքը, այսինքն՝ շատ մեծ ենթակառուցվածքի մասին է խոսքը, շատ աշխատանք կա անելու նաեւ ենթակառուցվածքային մասով մինչեւ բուհերի բովանդակային տեղափոխումը: Մենք նախատեսում ենք, որ առաջին փուլը տեղի կունենա 2030 թվականին, իսկ երկարաժամկետը մի քանի տասնամյակի կտրվածքով է:

-Տիկին Ղազարյան, նաեւ անհանգստություն կա ուսանողների շրջանում. ասում են՝ հեռավոր գյուղերում բնակվող ուսանողը ինչպես է գալու, հասնի Ակադեմիական քաղաք: Սա չի՞ նպաստի նրան, որ ուսանողը կհրաժարվի բարձրագույն կրթություն ստանալուց:

-Բանականաբար, Ակադեմիական քաղաքի ենթակառուցվածքները ենթադրում են հանրակացարանային հատվածներ, կլաստերներ, եւ ինչպես որ հեռավոր գյուղերից գալիս են եւ Երեւանում բնակարաններ են վարձում, ինչն ընտանիքների համար ծախսատար է, այդ դեպքում էլ հեռավոր գյուղերից կգան եւ կմնան այդ տարածքում՝ Երեւանի եւ Աշտարակի միջեւ. հանրակացարանները կամ շատ մատչելի, կամ գրեթե անվճար կլինեն ուսանողների համար: Սա հայեցակարգային հարց է եւ դեռեւս քննարկման փուլում է՝ կախված իր ծախսերից, բայց նման խնդիր, կարծում եմ, չի առաջանա:

-Իսկ տրանսպորտի հետ կապվա՞ծ:

-Ես ենթադրում եմ, որ Դուք պետք է որ տեսած լինեք մեր գերմանացի գործընկերների հանրային մեկնաբանությունները՝ դրա հետ կապված: Առաջին բանը, որ նրանց հետաքրքիր է քաղաքը նախագծելու համար, իհարկե, տրանսպորտային ենթակառուցվածքներն են, որովհետեւ դա նաեւ նրանց վարկանիշի համար է խնդիր. նրանք մի քանի տասնամյակ գործող կազմակերպություն են, որ շատ հաջողակ ծրագրեր ունեն, այդ թվում՝ ուսանողական քաղաքների, եւ իրենց համար ամենակարեւորն այն է, թե ինչպես են մարդիկ հասնելու, որպեսզի դատարկ քաղաք չլինի: Տարածքը, որի մասին խոսում ենք, գտնվում է Հյուսիս-հարավ մայրուղու հարակից տարածքում, այսինքն՝ դա, այսպես ասած, աշխարհաքաղաքական նշանակության տրանսպորտային ենթակառուցվածք է, այդտեղով է անցնում նաեւ երկաթգիծը, որն այս պահին բեռնափոխադրող է, բայց ուղեւորատար գնացքների հնարավորություն ենք այս պահին քննարկում, որը կարող է հասցնել ուսանողներին քաղաք: Ինչպես գիտեք, դեպի այդ կողմ նաեւ քաղաքապետարանը նախագծում է Աջափնյակ մետրոյի կայարանը, որից շատ ավելի մոտ կլինի Ակադեմիական քաղաքը:

Զրուցեց ԵՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՍԱ ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆ Է

ԲԱ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՐ

Մարտի 15-ից ՌԴ-ում մեկնարկել էին նախագահական ընտրությունները: ՌԴ նախագահի պաշտոնին հավակնում էին ՌԴ ԿԸՀ-ի կողմից գրանցված չորս թեկնածուներ՝ Լեոնիդ Սլուցկին, Նիկոլայ Խարիտոնովը, Վլադիսլավ Դավանկովը եւ Վլադիմիր Պուտինը:

Նշենք, որ Պուտինն ու ՌԴ վարչապետը քվեարկել են առցանց՝ դուրս չգալով իրենց աշխատասենյակից:

Նախագահական ընտրություններում Վլադիմիր Պուտինը հավաքել է ձայների 87. 97%-ը, ինչը ռեկորդային է ժամանակակից Ռուսաստանի պատմության մեջ:

Այս թեմայով ArmLur.am-ը կապ հաստատեց ՀՀԿ ԳՄ անդամ Էդուարդ Շարմազանովի հետ՝ պարզելու համար՝ արդյոք կարող էր Վլադիմիր Պուտինն այդքան ձայն հավաքել ընտրություններում, եւ ինչքանով է ճիշտ համարում Պուտինի՝ նախագահ ընտրվելը:

Շարմազանովի խոսքով՝ այսպես էլ պետք է լիներ, եւ սա Վլադիմիր Պուտինի անձնական ընտրությունը չէ:

«Բա ինչ պետք է աներ: Ինչ-որ մեկը կասկածում էր, որ ՌԴ նախագահը, այն էլ Ուկրաինայում ընթացող մարտական գործընթացներին զուգահեռ, պետք է պարտվե՞ր: Սա Պուտինի անձնական ընտրությունը չի, սա լեգիտիմություն է: Ռուսաստանի քաղաքացիների կողմից սատարվում է պետության, Ռուսաստանի ինքնիշխանության ու անկախության պայքարը՝ ընդդեմ հավաքական Արեւմուտքի»,- ասաց Էդուարդ Շարմազանովը:

«Ես՝ որպես քաղաքական գործիչ, որպես քաղաքագետ, որպես Ռուսաստանին բարեկամ նայող մարդ, որպես ով կուզեք, մի բան հստակ կարող եմ ասել, որ Ռուսաստանի քաղաքացիները ոչ թե քարտբլանշ տվեցին, այլ իրենք այս պատերազմական փուլում, Ռուսաստանի համար այս վճռական փուլում իրենց սատարումը հայտնեցին պետական կառավարման, արտաքին քաղաքական ու անվտանգային գոտուն, որն իրականացնում է ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը»,- մեզ հետ զրույցում նշեց Շարմազանովը՝ նաեւ հավելելով, որ Ռուսաստանում երբեք ոչ մի ընտրություն այսքան բարձր ցուցանիշ չի գրանցել:

Սահմանափակելով զրույցը՝ Շարմազանովն ասաց, որ եթե Արեւմուտքը ներկայացնում է, որ Պուտինն իբրեւ իր անձնական ամբիցիաների կռիվն է տալիս, կարող ենք ասել, որ ռուս ժողովուրդն այս ընտրությունով ասաց, որ իր նախագահին է սատարում, ինչ անում է, նրա կողքին են:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթին ՀՀ քննչական կոմիտեում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանի հարցաքննությունից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, Արսենյանի հարցաքննությունը տեւել է մոտ մեկ ժամ. վերջինս քննիչի հարցերին, թե ճանաչում է արդյոք գործով կալանավորվածներին, երբեւէ տեսել է նրանց կամ շփվել նրանց հետ, պատասխանել է, որ ծանոթ չէ ու երբեւէ չի ճանաչել: Ի դեպ, ամենաուշագրավն այն է, որ այս քրեական գործը քննում են ԱԱԾ-ից քննչական տեղափոխված ԱԱԾ քննիչները:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ հաջորդը ՀՀ քննչական հրավիրվելու է ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանը, որի բակ էին ցանկացել պայթուցիկ նետել, բայց պատահմամբ պայթուցիկը գցել էին նրա հարեւանի բակ: Նշենք, որ երեկ ArmLur.am-ի թղթակիցը նկատել է, թե ինչպես է ՔՊ պատգամավոր Գուրգեն Արսենյանը մտնում Քննչական կոմիտե: ArmLur.am-ին հայտնի էր դարձել, որ նրան հարցաքննել են իր գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու քրեական վարույթի շրջանակներում:

Նկատենք, որ ՔՊ գրասենյակի եւ «Միավորված աշխատանքային կուսակցության» հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու գործով կալանավորվածները չեն ընդունում առաջադրված մեղադրանքը: Գործով կալանավորվածներից մեկը ՀՅԴ անդամ Գագիկ Սարգսյան է եւ Վահան Հովհաննիսյանը: ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին, կիրառելով քողարկման եւ չբացահայտվելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ, քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված՝ որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, իսկ որպես խոցման միջոց՝ հեղյուսներ եւ մանեկներ պարունակող, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Ապա՝ նույն ժամանակահատվածում, պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդկերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք՝ զուգորդված քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու եւ այլ ծանր հետեւանքներ առաջացնելու վտանգով: Վ.Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել, եւ նշված հետեւանքները վրա չեն հասել պատահականությամբ՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմը հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Նշված արարքները կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, այդ թվում՝ ահաբեկչություն կատարելու համար, քրեական հետապնդում է հարուցվել 4 անձի նկատմամբ, եւ բոլորը կալանավորված են:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Ղազախստանի արտաքին գործերի նախարար Մուրատ Նուրտլեուին ներկայացրել է Հարավային Կովկասում տիրող իրավիճակը եւ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Ղազախստանի ԱԳ նախարարի հետ Երեւանում կայացած հանդիպումից հետո այս մասին հայտնեց ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

«Եվս մեկ անգամ հնարավորություն ունեցա ընդգծելու, որ Հայաստանը նվիրված եւ հավատարիմ է խաղաղության օրակարգին եւ գործադրում է բոլոր ջանքերն Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ստորագրման համար՝ հիմնված տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման եւ սահմանների հետագա սահմանազատման վրա: Գաղտնիք չէ, որ այս հարցերում առանցքային է 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագիրը, որով Խորհրդային Միության նախկին հանրապետությունները ճանաչել են նորանկախ հանրապետությունների միջեւ միջազգային պետական սահմանները: Ինքնիշխանությունը եւ տարածքային ամբողջականությունը հիմնական սկզբունքներն են, որոնց հիման վրա պատկերացնում ենք խաղաղությունը եւ ներդաշնակությունը Հարավային Կովկասում եւ շատ ավելի լայն տարածաշրջանում»,- ընդգծեց Միրզոյանը:

ԴԱՐՁՆԵԼՈՎ ԽՈՑԵԼԻ

«Խնդիրը մեկն է՝ կտրել եւ դժվարացնել Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան հաղորդակցության այս ուղին, ջլատել Հայաստանի պաշտպանական բնագիծը նաեւ այս հատվածում՝ մեր երկիրը դարձնելով էլ ավելի խոցելի, իսկ հոգեբանական մակարդակում ամրապնդել Բաքվի վարչախմբի պարագլխի «անպարտելության» առասպելը մեր եւ ադրբեջանական հասարակությունների ուղեղում»,- իր տելեգրամ ալիքում գրել է ԵՊՀ իրանագիտության ամբիոնի վարիչ, իրանագետ Վարդան Ոսկանյանը:

«Կասե՞ք՝ Բաքվի բարբարոսական վարչախմբի ինչին են պետք Հայաստանի Տավուշի մարզում մեր այն գյուղերը, որոնց մասին այսօր ծավալվել է լայն «քննարկում»:

Ոչ մի պատմական, մշակութային, տնտեսական կամ նման այլ նշանակություն այդ գյուղերն արհեստածին Ադրբեջանի համար, ըստ էության, չունեն:

Խնդիրը մեկն է՝ կտրել եւ դժվարացնել Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան հաղորդակցության այս ուղին, ջլատել Հայաստանի պաշտպանական բնագիծը նաեւ այս հատվածում՝ մեր երկիրը դարձնելով էլ ավելի խոցելի, իսկ հոգեբանական մակարդակում ամրապնդել Բաքվի վարչախմբի պարագլխի «անպարտելության» առասպելը մեր եւ ադրբեջանական հասարակությունների ուղեղում»:

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ

ԻՆՉ ԱՍԵԼԻՔՈՎ ԷՐ ԱՅՑԵԼԵԼ ՄԱՐԶ

Տավուշի մարզում ունեցած հանդիպումներից հետո վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշ մանրամասներ է հայտնել ունեցած բնաբերումներից:

«Ազատություն» ռադիոկայանի թղթակցի հետ զրույցում Փաշինյանն ասել է, որ հանդիպումներն ամբողջությամբ տեսաձայնագրվել են, եւ տեսանյութը կհրապարակվի, սակայն չեն հրապարակվի այն հատվածները, որոնք գաղտնիքի տարրեր են պարունակում:

Հարցին, թե ինչ ասելիքով էր այցելել մարզ եւ ինչ է առաջարկել, վարչապետն ասել է, որ ամենակարեւորն այն ասելիքն էր, որի մասին խոսել էր նաեւ մարտի 12-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:

«Հայաստանի այն նույն ուրվագիծը, որ ցույց եմ տվել այնտեղ, ցույց եմ տվել նաեւ այստեղ, եւ ասելիքը կառուցված էր դրա վրա»,- ասել է Փաշինյանը:

Դիտարկմանը, որ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի բնակիչները մտահոգություն ունեն, որ, այսպես կոչված, անկլավներն Ադրբեջանին հանձնելու դեպքում իրենք կհայտնվեն շրջափակման մեջ, Փաշինյանը պատասխանել է. «Դա մեզ էլ են ասել, եւ մենք այդ հարցերին պատասխանել ենք: Մեր մոտեցումն այն է, որ մարդկանց բարձրացրած այդպիսի մի հարց պետք է չլինի, որը կմնա անպատասխան: Եթե մնա անպատասխան, դա կնշանակի, որ մենք այդ հարցին լուծում չունենք»:

Հարցին, թե ունեին բնակիչների հարցերի պատասխանները, Փաշինյանն ասել է, որ որոշ հարցերի պատասխաններ ունեին: «Որոշ հարցերի հետ կապված էլ ես մարդկանց ասացի, որ ես եկել եմ ոչ միայն հարցերին պատասխանելու, այլ այդ հարցերը հավաքելու եւ դրանք կառավարության սեղանին որպես օրակարգ դնելու, դրանց պատասխանի շուրջ մտածելու ու պատասխանով վերադառնալու համար: Հարցեր կային, որոնց սրությունը տեղում ավելի գործնական ու ավելի էմոցիոնալ զգացի»,- նշել է Փաշինյանը:

Նա շեշտել է՝ ամենակարեւորն այն է, որ կառավարությունը գործնական կառուցակարգերով հիմնավորի մարդկանց անվտանգությունը:

Հարցին, թե հանդիպումների ժամանակ մարդկանց մոտ հուսահատություն զգացել է արդյոք, Փաշինյանը բացասական պատասխան է տվել: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 18-ին հանդիպում է ունեցել Տավուշի մարզի Ոսկեպար, Բաղանիս, Կիրանց եւ հարակից այլ համայնքների բնակիչների հետ:

ՀՀ վարչապետը մարտի 12-ին տված իր մամուլի ասուլիսի ընթացքում չի բացառել, որ Ադրբեջանի հետ սահմանի դելիմիտացիայի գործընթացը կարող է սկսվել Տավուշի մարզից:

«Նախկինում էլ չեմ բացառել եւ չեմ բացառում, որ դելիմիտացիայի գործընթացը կարող է սկսել Տավուշի մարզից: Եվ այս գործընթացի շուրջ որոշումներ կայացնելիս մենք պետք է ելնենք իրողությունների եւ իրավիճակի համապարփակ վերլուծությունից եւ Հայաստանի շուրջ առկա անվտանգային մարտահրավերները եւ իրադրության կայունության ապահովման պահանջները, անհրաժեշտությունները կառավարելու տրամաբանությամբ»,- նշել էր վարչապետը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Մարտի 20-ին՝ ժամը 15:30-ին, Երեւան քաղաքի Ազատության հրապարակում կազմակերպվելու է հանրահավաք՝Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնությամբ:

Հանրահավաքի նպատակն է վերանայել ՀՀ կառավարության կողմից քննարկվող՝ Արցախի ժողովրդի բնակարանային կարիքների ապահովման ծրագրի նախագիծը, որը չի արտացոլում արցախցիների հավաքական շահերն ու նպատակները:

Արցախ հավաքական վերադարձի հարցը գերակա համարելով՝ հանրահավաքի ժամանակ նախատեսվում է քննարկել եւ բարձրաձայնել Արցախի ժողովրդի լայն շրջանակների առաջարկներն ու պահանջները թե՛ վերադարձի եւ թե՛ բնակարանային ու սոցիալական այլ ծրագրերի վերաբերյալ:

Արցախի ժողովրդի կարիքների ապահովման նախաձեռնությունը բաղկացած է արցախյան շուրջ 40 կազմակերպություններից, որը որեւէ առնչություն չունի քաղաքական ուժերի եւ ներքաղաքական պայքարի հետ:

ArmLur.am-ը կապ հաստատեց քաղաքագետ Ռոբերտ Ղեւոնդյանի հետ՝ հասկանալու համար՝ արցախցիները ինչ ակնկալիքներ կարող են ունենալ հանրահավաքից.

«Չեմ կարծում, որ հավաքի միջոցով հնարավոր է որեւէ բան փոխել, գուցե այդկերպ փորձում են իրենց ձայնը լսելի դարձնել»:

Քաղաքագետը արցախցիներին խորհուրդ է տալիս աշխատել պետական մարմինների հետ:

«Եթե հավաքվում են, ուրեմն հավաքվեն, գնան որեւէ պետական մարմնին դիմեն, նամակ հանձնեն, իրենց առաջարկները, խնդիրները ներկայացնեն»,-ասում է Ռոբերտ Ղեւոնդյանը:

ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ

Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովը հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի կովկասյան բանակցությունների գծով ավագ խորհրդական Լուիս Բոնոյի հետ:

Այս մասին հայտնում են ադրբեջանական ՁԼՄ-ները:

Ի թիվս այլ թեմաների՝ հանդիպման մասնակիցները քննարկել են Բաքվի եւ Երեւանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացը:

Ադրբեջանի ԱԳՆ մամուլի ծառայության փոխանցմամբ՝ հանդիպման քննարկման թեմաներից են եղել նաեւ Ադրբեջանի եւ ԱՄՆ-ի երկկողմ եւ բազմակողմ հարաբերությունների օրակարգն ու հեռանկարները:

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կիրանցում հանդիպել է բնակիչների հետ: Այս մասին տեղեկանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ֆեյսբուքյան էջում կատարված հրապարակումից: Ավելի վաղ գրառում էր կատարել ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը՝ տեղեկացնելով, որ Նիկոլ Փաշինյանը Ոսկեպարում հանդիպում է Ոսկեպարի, Բաղանիսի եւ հարակից բնակավայրերի բնակիչների հետ: ՀՀ վարչապետը մարտի 12-ին տված իր մամուլի ասուլիսի ընթացքում չի բացառել, որ Ադրբեջանի հետ սահմանի դելիմիտացիայի գործընթացը կարող է սկսվել Տավուշի մարզից:

«Նախկինում էլ չեմ բացառել եւ չեմ բացառում, որ դելիմիտացիայի գործընթացը կարող է սկսել Տավուշի մարզից: Եվ այս գործընթացի շուրջ որոշումներ կայացնելիս մենք պետք է ելնենք իրողությունների եւ իրավիճակի համապարփակ վերլուծությունից եւ Հայաստանի շուրջ առկա անվտանգային մարտահրավերները եւ իրադրության կայունության ապահովման պահանջները, անհրաժեշտությունները կառավարելու տրամաբանությամբ»,- նշել էր վարչապետը:

ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՎՈՒՄ

ՀԱՆՑԱԳՈՐԾՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

Իրավապահները դեռեւս փնտրում են տնտեսագետին կյանքից զրկած ենթադրյալ հանցագործ Հարություն Մկրտչյանին: Մեզ հայտնի դարձավ, որ Մկրտչյանը, որն այս պահին որոնվում է մարդ սպանելու համար, նախկինում դատված է եղել:

Մասնավորապես, Հարություն Մկրտչյանին եւ Արգիշտի Գոմցյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ Երեւանի «Արմենիա» ՀԲԿ-ի վերակենդանացման եւ սուր թունավորումների բաժանմունքում կատարել են խուլիգանություն՝ կոպիտ կերպով խախտել են հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ զուգորդված որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ հիվանդանոցի գույքը վնասելով եւ անվտանգության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելով: Այս արարքի համար դատարանը 2017 թվականին վերջնական պատիժ էր սահմանել ազատազրկում՝ 7 տարի 6 ամիս ժամկետով: Հիշեցնենք, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանություն քաղաքացուց ահազանգ է ստացվել այն մասին, որ ինքն արնաքամ է լինում Երեւան քաղաքի Ա. Պուշկին փողոցում: Նույն օրը՝ ժամը 02:36-ին, «Մխիթար Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցից եւս ահազանգ է ստացվել, որ Ա. Պուշկին փողոցից «պոլիտրավմա» ախտորոշմամբ շտապ օգնության խմբի կողմից իրենց մոտ է տեղափոխվել անգիտակից վիճակում գտնվող անձ: Պարզվել է, որ վերջինս Երեւան քաղաքի բնակիչ Յուրի Մինասյանն է: Վերոգրյալի առթիվ 2024 թվականի մարտի 6-ին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Յուրի Մինասյանը ճանաչվել է տուժող: 2024թ. մարտի 6-ին դեպքի վայրում՝ Երեւան քաղաքի Պուշկին 58-րդ հասցեում կատարված զննությամբ վերցվել է արնանման հետք: Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն: Նախաքննությամբ վկաների մասնակցությամբ զննության են ենթարկվել ստացված տեսագրություններ, հարցաքննվել են մի շարք անձինք, կատարվել են նաեւ այլ ապացուցողական եւ վարութային գործողություններ: Քննությամբ պարզվել է, որ Յ. Մինասյանը մարտի 5-ին՝ ուշ երեկոյան, իր ընկերների հետ գտնվել է Երեւան քաղաքի Պուշկին փողոցում գործող «Բիթլզ» ակումբում, որտեղ տարաձայնություններ են առաջացել այնտեղ գտնվող մեկ այլ անձի՝ Երեւան քաղաքի բնակիչ Հ.Մ.-ի հետ: Պարզաբանումների նպատակով վերջիններս դուրս են եկել այնտեղից եւ գնացել Երեւան քաղաքի Փարպեցի փողոցում գտնվող Սրբ Ջորավոր եկեղեցու հետնամաս: Այնտեղ վիճաբանությունը վերածվել է ծեծկռտուքի, որի ընթացքում Հ. Մ.-ն բռունցքներով հարվածներ է հասցրել Յուրի Մինասյանի դեմքի հատվածին՝ պատճառելով ծանր զուգակցված գանգուղեղային վնասվածք՝ գանգի բազմաթիվ ոսկրերի կոտրվածքներ: Վերջինս ծայրահեղ ծանր վիճակում տեղափոխվել է հիվանդանոց: Ձեռք բերված փաստերի հիման վրա՝2024թ. մարտի 9-ին վարույթ իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազություն՝ ենթադրյալ հանցագործություն կատարած Հ. Մ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով (խուլիգանական դրդումներով մեկ ուրիշին ծանր մարմնական վնաս պատճառելը) հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը նույն օրը բավարարվել է: Հանձնարարություն է տրվել Ոստիկանությանը՝ Հ. Մ.-ին հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու նպատակով, սակայն վերջինս դեռեւս չի հայտնաբերվել: 2024 թվականի մարտի 14-ին «Մխիթար Հերացի» թիվ 1 համալսարանական հիվանդանոցից ստացվել է տեղեկություն, որ նույն օրը՝ ժամը 06:30-ին, հոսպիտալացված Յուրի Մինասյանը մահացել է: Նույն օրը վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել դատախազություն՝ ենթադրյալ հանցագործություն կատարած Հ. Մ.-ի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ եւ 15-րդ կետով (խուլիգանական դրդումներով մեկ ուրիշին ծանր մարմնական վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է հանցագործությունից տուժած անձի մահ) նոր հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը նույն օրը բավարարվել է: Միջնորդություն է ներկայացվել Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ: Նախաքննությունը շարունակվում է: Միջոցներ են ձեռնարկվում Հ.Մ.-ին հայտնաբերելու, ինչպես նաեւ դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու ուղղությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ

ՉԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանն երեկ Քննչական կոմիտեում էր: ArmLur.am-ի թղթակիցը նկատել է, թե ինչպես է ՔՊ պատգամավորը մտնում Քննչական կոմիտե: ArmLur.am-ն հայտնի դարձավ, որ նրան հարցաքննում են իր գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու քրեական վարույթի շրջանակներում:

Նկատենք, որ ՔՊ գրասենյակի եւ «Միավորված աշխատանքային կուսակցության» հիմնադիր ղեկավար Գուրգեն Արսենյանի գրասենյակի մոտ պայթուցիկ տեղադրելու գործով կալանավորվածները չեն ընդունում առաջադրված մեղադրանքը: Գործով կալանավորվածներից մեկը ՀՅԴ անդամ Գագիկ Սարգսյան է եւ Վահան Հովհաննիսյանը:

ՀՀ քննչական կոմիտեն պարզել էր, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամներին, նրանց աջակիցներին ահաբեկելու համար 2024 թվականի փետրվարի 20-ին, կիրառելով քողարկման եւ չբացահայտվելու համար անհրաժեշտ որոշակի միջոցներ, քաղաքացին գնացել է Երեւան քաղաքի Գյուլբենկյան 33 հասցեում գտնվող «Միավորված աշխատանքային կուսակցության» գրասենյակի մոտ եւ ժամը 03:50-ին գրասենյակից 9 մետր հեռավորության վրա գտնվող մայթեզրի ծառի տակ տեղադրել է նախապես պատրաստված, որպես պայթեցման միջոց շուրջ 1 կիլոգրամ տրոտիլ եւ պենտալիտ, իսկ որպես խոցման միջոց՝ հեղյուսներ եւ մանեկներ պարունակող, ավերածություններ գործելու, մարդկանց կյանքից զրկելու, շրջակա շինություններն ամբողջությամբ ավերելու համար պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը:

Ապա նույն ժամանակահատվածում պիտանի ինքնաշեն պայթեցման սարքը տեղադրել են Գյուլբենկյան 30/3 հասցեում գտնվող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարածքային գրասենյակի մուտքի մոտ՝ այդկերպ առաջացնելով պայթյունի եւ հրկիզման իրական սպառնալիք՝ զուգորդված քաղաքացիական անձանց կյանքից զրկելու, նրանց առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու, խոշոր չափերի գույքային վնաս պատճառելու եւ այլ ծանր հետեւանքներ առաջացնելու վտանգով: Վ.Հ.-ի կողմից տեղադրված պայթեցման սարքերը չեն պայթել, եւ նշված հետեւանքները վրա չեն հասել պատահականությամբ՝ ինքնաշեն պայթեցման սարքերի գործարկման մեխանիզմը հաշվարկված եղանակով չգործելու պատճառով:

Նշված արարքները կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, այդ թվում՝ ահաբեկչություն կատարելու համար, քրեական հետապնդում է հարուցվել 4 անձի նկատմամբ, եւ բոլորը կալանավորված են:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՎՏՈՎԹԱՐ

ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ

Մարտի 18-ին ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 09:20-ի սահմաններում Սիլիկյան թաղամասում՝ ՀՀ Երեւան քաղաքի Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի հարեւանությամբ, բախվել են Երեւանի բնակիչներ 26-ամյա Հայկ Սարգսյանի վարած «Mitsubishi» մակնիշի եւ 74-ամյա Մնացական Կուրղինյանի վարած «Nissan» մակնիշի ավտոմեքենաները:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի հետեւանքով բարեբախտաբար տուժածներ չկան, իսկ բախման հետեւանքով «Mitsubishi»-ն դուրս է եկել երեւկելի գոտուց, բախվել ճանապարհային երթեւեկությունը կարգավորող ցուցանակին:

Օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատար Գոռ Առաքելյանի, վաշտի հրամանատար Արմեն Զաքարյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկ Վարդան Միսակյանն ու կրտսեր պարեկ Դավիթ Խաչատրյանը:

Վարորդները ենթարկվել են սթափության փորձաքննության, եղել են սթափ:

Վթարի փաստով ՊԾ Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակում փաստաթղթեր են ձեւակերպվում:

Վթարի մեջ վարորդները մեղադրում են միմյանց, սակայն դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, որոնք հրաժարվեցին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին, որ վթարի մեղավորը «Nissan»-ի վարորդն է եղել, որը վթարային իրավիճակ է ստեղծել «Mitsubishi»-ի վարորդի համար, ինչն էլ դարձել է վթարի պատճառ: Այդ տեղեկությունը պարեկային ծառայությունը պարզում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 15-ից մարտի 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 227 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍԱՌՆ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մարտի 18-ին Ոսկեպարի մշակույթի տանը հանդիպում է ունեցել Ոսկեպարի, Բաղանիսի, Ոսկեվանի բնակիչների հետ: Հանդիպմանը մասնակցել են փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, Նոյեմբերյան խոշոր համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանը, Ոսկեվանի, Ոսկեպարի, Բաղանիսի վարչական ղեկավարները: Նախկինում Նիկոլ Փաշինյանին Ոսկեպարում ջերմ էին ընդունում, այս անգամ Փաշինյանին ընդունել են շատ սառը, նույնիսկ՝ անբարյացակամ: Երբ Փաշինյանը դահլիճ է մտել, ներկաներից կեսը ոտքի չի կանգնել: Հանդիպման մասնակիցները հայտնեցին, որ երբ Նիկոլ Փաշինյանը ցուցադրել է Հայաստանի Հանրապետության քարտեզի փոքր մակետը, ոսկեպարցիներից մեկը դժգոհել է՝ ասելով, որ այդ «ժեշտի կտորը» նորից է ցուցադրել: Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ Տավուշի սահմանագոտում նախկինում ադրբեջանաբնակ 4 գյուղերի տարածքները պետք է հանձնվեն Ադրբեջանին, այլապես Ադրբեջանը պատերազմ է սկսելու: Նրան հարցրել են, թե այդ 4 գյուղերի տարածքները հանձնելուց հետ ինչ երաշխիք կա, որ դրանից հետո Ադրբեջանը նորից առաջխաղացում չի ունենալու սահմանում, կամ պատերազմ չի սկսելու: Նիկոլ Փաշինյանն ասել է, որ երաշխիքներ չկան, սակայն հույս կա, որ Ադրբեջանը այդպես չի վարվի: Փաշինյանին ասել են, որ Հայաստանի 31 գյուղերի տարածքներ ներկայումս Ադրբեջանի զինուժի կողմից օկուպացվել են, ինչո՞ւ սահմանագծումն ու սահմանազատումը դրանցից չի սկսվում: Նիկոլ Փաշինյանը այդ հարցին տրամաբանական պատասխան չի տվել: Նիկոլ Փաշինյանը մասնավորապես հայտարարել է, որ այդ 4 գյուղերի պարագայում 3 տարբերակ կա՝ դրանք հանձնել, չհանձնել, Ադրբեջանի հետ պատերազմել. վերջին դեպքում Թուրքիան պատերազմի մեջ կմտնի Ադրբեջանի կողմից: Հանդիպման մասնակիցները կարծում են, որ Թուրքիայի անունը տալով՝ Նիկոլ Փաշինյանը փորձել է ոսկեպարցիներին վախ ներշնչել, համոզել, որ 4 գյուղերը պետք է անպայման հանձնել: Ոսկեպարցիները մտահոգություն են հայտնել, որ հիշյալ 4 գյուղերի տարածքներն Ադրբեջանին հանձնելուց հետո Հայաստան-Վրաստան, Իջևան-Նոյեմբերյան երթեւեկը խափանվելու է. վարչապետն ասել է , որ հարկ եղած դեպքում Ոսկեպարում ավտոմոբիլային թունել կփորվի, կառուցվելու է Ենոքավան-Ջուջևան սարերով ձգվող ճանապարհը: Ոսկեպարի բնակիչ Ռոբերտ Մելիքյանն ասել է, որ անցած շաբաթ ինքը Ոսկեպարում հանդիպել է ՊՆ Սուրեն Պապիկյանին, վերջինս իրեն ասել է, որ իրենք այդ 4 գյուղերի տարածքները չեն հանձնելու, քանի դեռ Ադրբեջանը պահում է Բերքաբեր գյուղից ավելի քան 700 հեկտար եւ այլ հողեր: Նիկոլ Փաշինյանն ի պատասխան հայտարարել է՝ թող Սուրեն Պապիկյանն իր գործով զբաղվի:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՆՈՒՆԴ»

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ՝ ՕՐԻՆԱԿԵԼԻ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը մարտի 18-ին ընդունել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի (ՊՀԾ) Մերձավոր Արեւելքի, Հյուսիսային Աֆրիկայի եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանային տնօրենի տեղակալ Քեյթ Նյուտոնի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ՄԱԿ-ի ՊՀԾ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Նաննա Սկաուն, «Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն» հիմնարկի տնօրեն Սաթենիկ Մկրտչյանը:

Ինչպես տեղեկանում ենք ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից, Ժաննա Անդրեասյանն ընդգծել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հետ արդյունավետ համագործակցության կարեւորությունն ու գրանցված հաջողությունները:

«Ուրախալի է, որ հայաստանյան փորձն օրինակելի է համարվում մի շարք պետությունների համար: Նախորդ տարի «Դպրոցական սնունդ» ծրագիրն ամբողջությամբ ազգայնացվեց եւ փոխանցվեց ՀՀ կառավարությանը, իսկ հոկտեմբերին Հայաստանը մասնակցեց Փարիզում անցկացված «Դպրոցական սնունդ» կոալիցիայի առաջին գլոբալ համաժողովին: Սա շատ կարեւոր նախաձեռնություն էր, որը թույլ տվեց մասնակիցը դառնալու այս գործընթացին եւ կիսելու մեր փորձը՝ ուսումնասիրելով նրանցը»,- ասել է Ժաննա Անդրեասյանը:

ՄԱԿ-ի ՊՀԾ-ի Մերձավոր Արեւելքի, Հյուսիսային Աֆրիկայի եւ Արեւելյան Եվրոպայի տարածաշրջանային տնօրենի տեղակալ Քեյթ Նյուտոնը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ շնորհավորել Հայաստանին ծրագրի ամբողջական ազգայնացման կապակցությամբ՝ շեշտելով, որ Հայաստանն ունի «Դպրոցական սնունդ» ծրագրի հաջող իրականացման օրինակ:

Նախարար Ժաննա Անդրեասյանը հանդիպման մասնակիցներին տեղեկացրել է՝ աշխատանքներ են տարվում 2025-26 ուսումնական տարվա մեկնարկին Երեւանի դպրոցները եւս «Դպրոցական սնունդ» ծրագրում ներառելու հնարավորության շուրջ, ինչը թույլ կտա մեծացնել շահառու երեխաների թիվը:

ԿԳՄՍ նախարարը նշել է՝ 2023 թվականի հունվարից ՀՀ 10 մարզերի 1075 դպրոցների 1-ից 4-րդ դասարանների հազարավոր երեխաներ սնունդ ստանում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Ընդ որում՝ շահառուների թիվը մեծացել է, քանի որ Ադրբեջանի կողմից 2023 թվականի սեպտեմբերի 19-ին սանձազերծած ռազմական ագրեսիայի հետեւանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ավելի քան 17 հազար դպրոցահասակ երեխաներ են ընդգրկվել ՀՀ մարզերի դպրոցներում: Առաջին իսկ օրերից լուծվել է տարրական դասարանների երեխաների սննդի հարցը, եւ այժմ նրանք մյուս աշակերտների հետ միասին տաք եւ առողջ սնունդ են ստանում:

«Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն» հիմնարկի տնօրեն Սաթենիկ Մկրտչյանի տեղեկացմամբ՝ սկզբնական շրջանում որոշ դպրոցներում տաք սննդով են ապահովվել նաեւ ավելի բարձր դասարաններում սովորող ԼՂ-ից բռնի տեղահանված աշակերտները:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը եւս կարեւորել է «Դպրոցական սնունդ» կոալիցիային Հայաստանի անդամակցությունն ու ընդգծել՝ Հայաստանում ծրագրի իրականացման հաջող փորձը հետաքրքրություն է առաջացրել նաեւ բազմաթիվ այլ երկրների շրջանում: Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է՝ Փարիզում անցկացված «Դպրոցական սնունդ» կոալիցիայի առաջին գլոբալ համաժողովի ընթացքում առաջարկվել է նաեւ համագործակցության ձեւավորում տեղական ինքնակառավարման մակարդակում, մասնավորապես՝ Միլանի եւ Երեւանի քաղաքապետարանների միջեւ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ «Դպրոցական սնունդ եւ երեխաների բարեկեցություն» հիմնարկի գործունեությանը՝ ընդգծելով դրա շարունակականության ապահովման կարեւորությունը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԿԴԱՌՆԱ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՍՓՈՒՄԱՆ

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը կունենա համապետական սփռում ունեցող երկու հեռուստալիք. այսպիսով, այժմ միայն մայրաքաղաքային սփռում ունեցող «Առաջինի լրատվական ալիքը» կհեռարձակվի ամբողջ հանրապետությունում:

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի ներկայացրած՝ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը հավանություն ստացավ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նիստում:

««Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից մեկ տեսալսողական ծրագիր հեռարձակվում է միայն մայրաքաղաքային սփռում ունեցող տարածքում, մեկ տեսալսողական ծրագիր՝ համապետական սփռմամբ: Նախագծով առաջարկվում է, որ հանրային հեռարձակողն ունենա առավելագույնը 2 տեսալսողական ծրագիր կամ, ավելի պարզ ասած, հեռուստաալիք՝ երկուսն էլ համապետական սփռում ունեցող, որպեսզի նաեւ, ըստ էության, չտուժեն հանրային մուլտիպլեքսում լիցենզիա ունեցող հեռուստաընկերությունների շահերը»,-ասաց Գաբրիելյանը:

Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հանրային հեռարձակողը կհրաժարվի մայրաքաղաքային սփռման սլոթից, ավտոմատ կդառնա համապետական սփռման:

Գաբրիելյանը հավելեց՝ Հանրային հեռուստաընկերության բյուջեն պետական բյուջեից է, ուստի նպատակահարմար չէ, որ այդ գումարն ուղղվի միայն երեւանյան հեռուստադիտողին:

Նախագծի հարակից զեկուցող Հասմիկ Հակոբյանը նկատեց, որ, Ֆինանսների նախարարության դիտարկմամբ, նախագծի ընդունմամբ բյուջեի վրա հավելյալ 64 մլն դրամի ծախս է գեներացվում, որը 2024թ բյուջեով նախատեսված չէ: Պատգամավորը հետաքրքրվեց, թե սրա հետ կապված քննարկում եղե՞լ է:

Նախագծի հեղինակը հայտնեց, որ եղել է քննարկում, որ, եթե ծածկույթը լինի համապետական, այդ բացը կարող են լրացնել Հանրային հեռուստաընկերության միջոցներից: Հանրային հեռուստաընկերությունը ֆինանսավորվում է ոչ միայն ՀՀ պետական բյուջեից, այլ նաեւ օրենքով չարգելված այլ եղանակներով, օրինակ՝ գովազդից կամ համատեղ ֆիլմարտադրություններից:

Հասմիկ Հակոբյանը նշեց, որ այսպիսով իրավական հիմքեր են ստեղծում մայրաքաղաքային սփռում ունեցող «Առաջինի լրատվական ալիքը» հասանելի դարձնել ամբողջ հանրապետության համար:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 32 պատահար. 1 մարդ զոհվել է, 50-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 09.06.2022 թվականի 842-Լ որոշման համաձայն՝ պետությունն ամբողջությամբ կմարի քաղաքացու տան հիփոթեքային վարկը, եթե տան նախահաշիվը չգերազանցի 16 մլն դրամը, եւ այն կառուցվի սահմանամերձ բնակավայրերում: Պարզելու համար՝ արդյոք քաղաքացիները հետաքրքրված են պետության կողմից առաջարկվող ծրագրին, ArmLur.am-ը կապ է հաստատել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հետ: «Վարդենիս համայնքում ծրագրից օգտվելու համար դիմել են 3 քաղաքացի, որոնց դիմումները ստացել են համապատասխան ընթացք, եւ մերժման դեպքեր չեն եղել: Ճամբարակ համայնքում եւս դիմել են 3 քաղաքացի, որոնցից 1-ը ստացել է դրական պատասխան, եւ այս պահին կատարվում են շինարարական աշխատանքները, իսկ մյուս երկու դիմումն ընթացքի մեջ են: Այս պահի դրությամբ Ճամբարակի համայնքապետարանը տրամադրել է դիմած 3 անձանց շինարարության թույլտվությունները եւ համապատասխան ձեւով ներկայացրել մարզպետարան: Մերժված դիմումներ չկան»,- հայտնեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սեւակ Խլղաթյանը:

ՉԿԱ ՏՐԱՆՍՊՈՐՏ

ArmLur.am-ը ահազանգ է ստացել Արագածոտնի մարզի Թալինի շրջանի գյուղ Ագարակավանի բնակիչներից: Նրանց խոսքով՝ Թալինի գրեթե բոլոր գյուղերում չկա տրանսպորտ, որով մարդիկ կարող են տեղափոխվել Թալին քաղաք, այնուհետեւ Երեւան: «Հենց Թալին քաղաքի մեջ կա ավտոբուս, բայց գյուղերում ոչ մի տիպի տրանսպորտ չկա. եթե մարդիկ ուզում են գնալ աշխատանքի կամ դասի, պիտի որեւէ ձեւ հասնեն Թալին քաղաքի մեջ, հետո նոր կարողանան հասնեն քաղաք, որի մեջ շատ ժամանակ տեղ չի լինում, որովհետեւ մնացած գյուղերն էլ են դրա հույսին: Այսինքն՝ այն մարդը, որն աշխատում է կամ սովորում, օրինակ, Երեւանում եւ չունի մեքենա Թալին քաղաք հասնելու համար, շատ ժամանակ հնարավորություն չի ունենում աշխատանքի կամ դասի գնալու»,- պատմում է Ագարակավանի բնակիչը: Նրա խոսքով՝ շատ լավ է, որ անվճար ուսանողական ավտոբուս կա, սակայն այդ նույն ավտոբուսը այսօր անսարքության է մատնվել, եւ մարդիկ չունեն այլընտրանքային տարբերակ: ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել Թալինի համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանի հետ մեկնաբանություն ստանալու նպատակով, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան:

ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ՎՏԱՆԳ՝ ՆԱԵՎ ՄՅՈՒՍ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Կոնսերվատորիայի փակվելու մասին տեղեկացել ենք համացանցից սոցցանցերում վիրուսի պես տարածվող, ապեսալի հեռեւանքների մասին ահազանգող աղմկահարույց լուրերից: Ամենուրեք մեզ՝ կոնսերվատորիայի ուսանողներիս, համալսարանից դուրս հարցադրումներ էին անում՝ ոմանք կոնսերվատորիայի փակվելու, ոմանք տեղափոխվելու, ոմանք էլ Ակադեմիական քաղաքի մաս կազմելու վերաբերյալ: Եվ այս ամենը գնալով ինչպես նյարդայնացնում, այնպես էլ մեզ հանդիման եկող ապեսի մասին էր ահազանգում: Բոլորին միաբերան մի պատասխան էինք տալիս՝ կոնսերվատորիան

- չի տեղափոխվելու,
- չի միանալու այլ բուհի
- մաս չի կազմելու Ակադեմիական քաղաքի:

Եվ այս պատասխաններն էլ անհերքելի փաստ ընդունած՝ միահամուռ կերպով մղվեցինք պայքարի՝ մեր բաժին պայքարին»,- ArmLur.am-ի հետ զրույցում իր բողոք-պահանջն է հայտնում կոնսերվատորիայի ուսանողուհի Ռիմմա Մարտիրոսյանը: Ռիմմա Մարտիրոսյանը սովորում է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բակալավրի 4-րդ կուրսում: Ռիմման ասում է, որ լինելով կոնսերվատորիայի սան՝ ինքը եւ իր համակուրսեցիներն իրենց պարտքն են համարում պայքարել ու անել ամենը՝ կոնսերվատորիան չփակելու համար: «Ես կոնսերվատորիայի ժառանգից եմ եւ իմ պարտքն եմ համարում պայքարել ու անել ինձնից կախված առավելագույնը՝ կանխելու այս աղետը: Անկախ այն հանգամանից, որ հաշված ամիսներ են մնացել իմ՝ շրջանավարտ դառնալուն, ես շարունակելու եմ իմ բաժին պայքարը, քանզի ես այստեղ տեսել ու զգացել եմ, թե ինչ նվիրումով է ամբողջ դասախոսական կազմը ջնջին վարձատրության դիմաց կրթում, դաստիարակում ու որպես որակյալ երաժիշտ թրծում, քանդակում յուրաքանչյուր ուսանողի»,- ասում է ուսանողուհին: Ռիմման ասում է, որ կոնսերվատորիայի պահպանության համար ստորագրահավաք են սկսել, որի արդյունքները համապատասխան նամակով ուղարկվելու են ԿԳՄՍ նախարարին: Նա հույս է հայտնում, որ նախարարը կընդառաջի իրենց պահանջին: «Առաջին շոշափելի քայլը հանուն կոնսերվատորիայի պահպանության սկսած ստորագրահավաքն էր, որը, մեր հայրենակիցների բազմաթիվ խնդրանքներից ելնելով, երկարաձգվել է մինչեւ մարտի 25-ը, քանզի ոչ բոլորն էին հասցրել ստորագրությամբ իրենց դիրքորոշումը հաստատել: Համապատասխան նամակին կից՝ ստորագրահավաքի արդյունքները ուղարկելու ենք ԿԳՄՍ նախարարին՝ որպես մեր եւ մեր հայրենակիցների արդար պահանջի դրսեւորում՝ գնահատել կոնսերվատորիայի դերն ու նշանակությունը եւ հետամուտ լինել վերջինիս պահպանությանը»,- նշեց ուսանողուհին եւ հավելեց, որ առաջիկայում նախատեսում են այլ գործողություններ՝ իրենց խոսքը լսելի դարձնելու համար: Անդրադառնալով կոնսերվատորիայի ունեցած նշանակությանը՝ ուսանողուհին նշեց. «Կոնսերվատորիան լոկ երաժշտական կրթություն տվող համալսարան չէ, այլ ազգի մշակութային դիմագիծը կերտող 100-ամյա կրթական սուրբ օջախ, որը կրթել եւ շարունակում է կրթել Հայաստանի մշակույթը միջազգային հարթակներում ներկայացնող որակյալ երաժիշտների: Եվ ամեն ինչից զատ, մեր ազգը պետք է գիտակցի, որ մեր կրթօջախի առջեւ ծառացած այս խնդիրը հավասարապես լուրջ վտանգ է նաեւ մյուս կրթօջախների համար: Վտանգի տակ է մեր ամբողջ կրթական համակարգը, մարում է կրթված ու գիտակից սերունդ ունենալու մեր մեծ հույսը: Այսպիսով, կոչ եմ անում միանալ մեր պայքարին եւ կանխել մոտալուտ աղետը, որն ուր որ է կթակի բոլորիս դռները: Մեր պայքարը շարունակվելու է, քանի դեռ հաջողությամբ չի պսակվել, իսկ այն հաստատ հաջողությամբ է պսակվելու»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2024թ.-ի ապրիլի 4-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից f. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 16 լոտ՝ ոսկյա ջարդոն՝ 8.2 գր. ընդհանուր քաշով, ոսկյա ջարդոնը (զուտ քաշը՝ 7.8 գր.)՝ 500 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 104.000 ՀՀ դրամ: Թիվ 17 լոտ՝ոսկյա զարդեր՝ 13.6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝13.5 գր.)՝ 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 215.000 ՀՀ դրամ: Թիվ 18 լոտ՝ ոսկյա ջարդոն՝ 5.5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը՝ 4.6 գր.)՝ 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 73.000 ՀՀ դրամ: Թիվ 19 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 48.2 գր. ընդհանուր քաշով, որից 20.6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը՝17.5 գր.)՝500 հարգի, 235.500 ՀՀ դրամ, 27.6 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը՝ 23.5 գր.)՝ 585 հարգի, 375.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 610.500 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝դիմումի հիման վրա:

Հեռ.՝+374 43 00 42 27:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆ

«ԶԱՐՄԱՆՔՈՎ ԿԸ ԴԻՏԵԻ ՉՈՐՍ ԿՈՂՄՍ»

Երեւանի Կոմիտասի անվան դանթեոնում ամփոփված Թորոս Թորամանյանը, որը հայ ճարտարապետության պատմության ոլորտում հիմք է դրել գիտական ուսումնասիրությանը, ծնվել է 1864 թվականին Փոքր Հայքի Շապին-Գարահիսար քաղաքում:

Զորավար Անդրանիկի ծննդավայրում իր կյանքը սկսած Թորոս Թորամանյանը Կոստանդնուպոլսի Կայսերական գեղարվեստի ճեմարանի ճարտարապետական բաժնում կրթություն ստանալուց հետո սկսում է ճարտարապետական նախագծեր իրականացնել, սակայն Պոլսում հայ բնակչության նկատմամբ երկօրյա կոտորածներից հետո մեկնում է Բուլղարիա:

Թորամանյանը չորս տարի ապրում է Բուլղարիայում՝ նախագծելով այնպիսի հայտնի հայերի առանձնատներ, ինչպիսին են եղել Մանուկյանները, Սարգիս Ֆաղյանը, Դանիել Բուլղարացին եւ այլոք: Բուլղարիայից հետո ճարտարապետը մեկնում է Ռումինիա, ապա Հունաստան, Եգիպտոս եւ Իտալիա՝ տեղում ծանոթանալու հին աշխարհի ճարտարապետական գլուխգործոցներին: 1902 թվականին մեկնում է Փարիզ՝ Սորբոնի համալսարանում մասնակցելու այդ ժամանակվա ամենահայտնի պրոֆեսորների՝ ճարտարապետության պատմության եւ արվեստի մասին դասախոսություններին, որպեսզի խորացնի գիտելիքները: Այդ ընթացքում գիտելիքներ է ձեռք բերել նաեւ հնագիտական ուսումնասիրությունների ոլորտում:

Բուլղարիա վերադառնալուց հետո՝ 1903 թվականին, հայագետ Կարապետ Պասմաճյանի առաջարկով նրա հետ երեք ամսով Անի է մեկնում, որը մեծ շրջադարձ է լինում Թորամանյանի համար, եւ նա իր «Զվարթնոց եկեղեցի» հոդվածի մեջ ապագայում գրում է. «Ես այս ամենը տեսա, երբ երկու տարի առաջ այցելեցի Անի: Զարմանքով կը դիտեի չորս կողմս եւ չէի ուզեր հավատալ տեսածներուս իրականությանը»:

Թորամանյանը հենց այստեղ էլ սկսում է զգալ հայ ճարտարապետության առանձնահատկությունները ու նկատել, որ դրա մասին պատմող աշխատություններ չկան, այն չի ուսումնասիրվել որպես գիտություն: Նա մնում է Անիում հայկական ճարտարապետությունը ուսումասիրելու նպատակով, ինչին էլ աջակցում է Նիկողայոս Մառը, որը երկրորդ անգամ պեղումներ էր իրականացնում Անիում:

Հաջորդ տարի Թորամանյանը մեկնում է Էջմիածին, որպեսզի ուսումնասիրի վաղ միջնադարյան հայ ճարտարապետության հուշարձանները, որտեղ էլ Զվարթնոցի տաճարի պեղումներ էր իրականացրել Խաչիկ վարդապետ Դադյանը: Նա մասնագիտական հմտություններ չունենալու պատճառով պեղումները դադարեցրել էր, եւ այն վերսկսում է Թորոս Թորամանյանը: Ամբողջությամբ հողի տակն անցած Զվարթնոցի տաճարը մեզ «վերադարձնելով»՝ Թորամանյանը կարողանում է ուսումնասիրել եւ հասկանալ ճարտարապետական այդ յուրահատուկ կառույցի ձեւերի ողջ իմաստը:

Թորամանյանը կարողանում է ամբողջությամբ վերարտադրել տաճարի չափն ու տեսքը, սակայն դրան թերահավատորեն են մոտենում՝ հաշվի առնելով այն փաստը, որ Զվարթնոցը զգալիորեն տարբեր է հայ իրականության մյուս բոլոր եկեղեցիներից: Սակայն ավելի ուշ Նիկողայոս Մառը Անիի Գագիկաշեն սուրբ Գրիգոր եկեղեցու պեղումների ժամանակ հայտնաբերում է Գագիկ Ա թագավորի արձանը՝ տաճարի մանրակերտը ձեռքին, որը նույնությամբ կրկնում էր Թորոս Թորամանյանի պատկերած հատակագիծը: Քանի որ հայտնի էր, որ Գագիկ Ա թագավորը, Գագիկաշենը կառուցելիս ցանկանում էր նույնությամբ կրկնել Զվարթնոցի տաճարը, պարզ է դառնում, որ Թորամանյանը ճշգրտորեն վերարտադրել էր շինության ծավալն ու կառուցվածքը:

1913 թվականին Թորամանյանը արվեստի ավստրիացի պատմաբան Յոզեֆ Ստրժիգովսկու հրավերով մեկնում է Վիեննա միասին հայ ճարտարապետության մասին աշխատություն գրելու նպատակով, սակայն հավելյալ նյութերի համար վերադառնում է Հայաստան եւ այլեւս Վիեննա մեկնել չի կարողանում. սկսվել էր առաջին համաշխարհային պատերազմը: Ճարտարապետի նյութերը մնում են Վիեննայում, եւ դրանց վրա հիմնվելով՝ Ստրժիգովսկին գրում է «Հայերի ճարտարապետությունը եւ Եվրոպան» աշխատանքը՝ որպես նյութերի հեղինակ նշելով Թորոս Թորամանյանին:

Ճարտարապետությունից եւ ճարտարապետության տեսությունից բացի, Թորամանյանը զբաղվել է նաեւ լուսանկարչությամբ եւ լուսանկարել է Անիի ավերակների ճարտարապետական ողջ ժառանգությունը:

1921 թվականին՝ Հայաստանի առաջին հանրապետության անկախության ընթացքում, դասախոսել է հին Հայաստանի ճարտարապետության պատմություն Երեւանի պետական համալսարանում:

Իր աշխատանքներով Թորամանյանը համաշխարհային ճարտարապետության պատմության մեջ էական դեր է խաղացել՝ ներկայացնելով հայերի ճարտարապետության ծագումն ու զարգացման շրջանները: Այսօր Հայաստանում նրա անունով մրցանակ է հանձնվում ոլորտի ներկայացուցիչներին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴԺԳՈՀ Է ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՑ

Հայաստանի հրաձգության հավաքականի գլխավոր մարզիչ Սեյրան Նիկողոսյանը դժգոհ է ներքին առաջնության արդյունքներից:

«Ես դժգոհ եմ Հայաստանի առաջնությունում մեր մարզիկների գրանցած արդյունքներից: Ցուցանիշները շատ ցածր էին, սպասվածից շատ ցածր: Եթե Եվրոպայի առաջնությունում գրանցած վատ արդյունքները կապում էինք լարվածության հետ, ապա այս առաջնությունում եւս վատ արդյունքներ ունեցանք, ինչը մտածելու լուրջ առիթ է տալիս»,- ասաց հավաքականի մարզիչը: Նիկողոսյանի խոսքով՝ մարզչական ժողովի միջոցով թիմը փորձելու է լուծումներ գտնել առկա բոլոր խնդիրներին: Անդրադառնալով տարվա կարեւորագույն մրցաշարին՝ Օլիմպիական խաղերին, Նիկողոսյանն առանձնացրեց՝ Էլմիրա Կարապետյանը, բացի իր հիմնական 10 մետրի վարժությունից, հնարավորություն ունի մասնակցելու նաեւ 25 մետրի մրցաշարին: «Հրաչյա Բաբայանը եւ Բենիկ Խլղաթյանը դեռեւս Օլիմպիական խաղերի ուղեգրի հույս ունեն: Երկու հնարավորություն կա՝ մեկը Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք վարկանիշային մրցաշարն է, մյուսը՝ Եվրոպայի առաջնությունը»,-առանձնացրեց հրաձգության հավաքականի մարզիչը:

«ԱՄԵՆ ԻՆՉ ՇՏԿԵԼՈՒ ԵՆՔ»

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ հեներիխ Մխիթարյանն անդրադարձել է Իտալիայի առաջնության 29-րդ տուրի «Նապոլի»-ի դեմ խաղին:

«Շատ կարեւոր խաղ էր, բայց ոչ այդքան ցանկալի արդյունքը, որը մենք ուզում էինք: Ընդմիջումից հետո մենք ամեն ինչ շտկելու ենք»,-սոցցանցերի իր էջերում գրել է Մխիթարյանը:

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 29-րդ տուրում «Ինտեր»-ը սեփական հարկի տակ հյուրընկալել էր «Նապոլի»-ին: Միլանյան ակումբին հաջողվեց առաջինը բացել հանդիպման հաշիվը: «Ինտեր»-ից աչքի ընկավ Մատեո Դարմիանը, սակայն «Նապոլի»-ին հանդիպման ավարտից որոպեներ առաջ պարտությունից փրկեց Ժուան Ժեզուսը՝«Ինտեր»-«Նապոլի»՝ 1:1: Այս տուրից հետո էլ «Ինտեր»-ը Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակի առաջատարն է: Թիմն ունի 76 միավոր: 62 միավորով երկրորդ տեղում «Միլան»-ն է:

ԵՐԿԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է

Հայաստանի ֆուտբոլի առաջնությունում՝ Պրեմիեր լիգայում, երկիշխանություն է:

25-րդ տուրից հետո «Փյունիկ»-ը եւ «Նոա»-ն ունեն հավասար 55 միավոր: Երկրորդ տեղում 49 միավորով «Արարատ-Արմենիա»-ն է: 4-րդ եւ 5-րդ տեղերում «Ուրարտու»-ն եւ «Ալաշկերտ»-ն են: 33 միավոր ունի «Արարատ»-ը (6-րդ տեղ):

Վերջին 4 տեղերը հաջորդաբար զբաղեցնում են «Վեստ Արմենիա»-ն (24 միավոր), «Վան»-ը (23 միավոր), «Շիրակ»-ը (22 միավոր) եւ ԲԿՄԱ-ն (22 միավոր): 26-րդ տուրի հանդիպումները կկայանան մարտի 30-31-ին:

ԿԻՆՈ

«ՍԵՎ ՀԱՅԵԼԻ»-Ն ՃԱՆԱՊԱՐՀԻՆ Է

«Սեւ հայելի»-ի (Black Mirror) յոթերորդ սեզոնը ճանապարհին է:

Netflix-ը հաստատել է, որ Չարլի Բրուկերի գիտաֆանտաստիկ Black Mirror-ը էկրան կվերադառնա 2025 թվականին: Նոր՝ յոթերորդ եթերաշրջանը, կունենա վեց սերիա:

Այս մասին հայտնում է The Verge-ը:

Դեռ շատ մանրամասներ չեն հաղորդվում, բայց ընկերությունն ասում է, որ թեեւ այն բաղկացած կլինի նոր պատմություններից, սակայն մասերից մեկը կլինի 4-րդ սեզոնի «USS Callister»-ի շարունակությունը, որտեղ գլխավոր դերակատարն էր Ջեսի Պլեմոնսը:

Շոուի վերադարձը համեմատաբար կարճ ընդմիջումից հետո է նախատեսվում գոնե Black Mirror-ի չափանիշներով: 6-րդ սեզոնի պրեմիերան տեղի է ունեցել 2023 թվականին եւ ներառում էր մի քանի սերիա, որոնք ընդգրկում էին տիեզերական թեմաներով սարսափից մինչեւ սթրիմինգի ապագայի երգիծանք:

●Մարտի 30-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որոնք են խնամքի տրամադրման տեսակները: Ո՞վ իրավունք ունի օգտվելու խնամքի ծառայություններից:

Ստելլա Մանուչարյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Մանուչարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ խնամքը տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր կամ հատուկ տիպի (մասնագիտացված) հաստատություններում եւ սոցիալ-վերականգնողական ցերեկային կենտրոններում տրամադրվում է ծերության սոցիալական կենսաթոշակի տարիքի հասած կամ 18 տարին լրացած միայնակ (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված խնամող չունեցող կամ ընտանիքում աշխատունակ անդամ չունեցող) հաշմանդամներին:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին, որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, ապա պարտավո՞ր է արդյոք հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անի Կիրակոսյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բոլորիս ծանոթ ծաղիկը՝ Շտերնբերգիա Ֆիշերին, ծաղկում է փետրվար-մարտ ամիսներին: Քչերը գիտեն, որ այն գրանցված է ՀՀ կարմիր գրքում եւ գտնվում է վերացման եզրին: Հորդորում ենք խնայել բնությունը, չքաղել եւ չգնել այս ծաղիկը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-4 -7 +4 +9
Կոտայքի լեռներ	-8 -10 +5 +8
Կոտայքի նախալեռներ	-5 -8 +10 +13
Գեղարքունիք	-8 -13 +3 +6
Լոռի	-6 -10 +8 +10
Տավուշ	-4 -7 +8 +11
Արագածոտնի լեռներ	-8 -12 +3 +6
Արագածոտնի նախալեռներ	-5 -7 +8 +11

Արարատ	-4 -7 +11 +13
Արմավիր	-4 -8 +10 +13
Վայոց ձորի լեռներ	-3 -7 +3 +6
Վայոց ձորի նախալեռներ	-3 -7 +10 +13
Սյունիքի հովիտներ	-4 -7 +11 +14
Սյունիքի նախալեռներ	-9 -13 +7 +10
ԼՂՀ	-9 -10 +7 +10
Երեւան	2 -4 +9 +13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*